Թ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 12 ԱՊՐԻԼ 1906 — ԹԻՒ 804

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 «
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 «

Յանձնուցման տողը տողին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է, երեքից աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը տրուայ:

—o—

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ է

Դիտակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
„Charjoum"
Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքի
15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքի
20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Դուրճակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ.

Տոմսակ գնել փափաքողներշ կրնան իրեն դիմել՝
Զար-Պորիս փողոց Վառնա

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԷՐՔԵՐԻՑ(*)

ԲԱԲԱ—ԳԱՍՊԱՐ—ԽԱԺԱԿ

Որքան մեծ գոհունակութիւն եմ զգում որ գրութեանս վերնագիրը կազմող անունները կրող պարոնը առիթը ստեղծեց սկսելու ուղղակի կովկասցիների հետ խօսիլ, որոնք իրական գաղափար չուներ Դաշնակցութեան մասին ու, տաճկահայի ազատագրութեան գործին վերաբերմամբ, մեծ յոյսեր ունեն այդ կազմակերպութեան վրա, որը միայն թաթարների յարձակման և կովկասցիների քաջութեան շնորհիւ կարողացաւ մի քիչ պորոկել իր կազմալոյծ վիճակը.

Այս անգամ ես կը խօսեմ միայն վերոյիշեալ պարոնի խնդրի շուրջը դառնալով, շատ մօտիկ ապագայում, մի փաստացի բրոշիւրով պարզել կովկասահայերին Դաշնակցութեան իրական վիճակը իր գոյութեան ամբողջ ընթացքում, որպէսզի կովկասցին կարողանայ ըմբռնել թէ՝ Դաշնակցութիւնը որչա՞փ ձեռներէցօրէն է կատարել իր վրա առած ծանր և դժուարին պարտականութիւնը, և որքա՞ն կարող է օգտակար լինել ապագայում, եթէ ընթացքը հինը մնայ, նախ, (ներողութիւն խնդրելով որ խորտակում եմ կեղծ համեստութեան աւանդական սովորութիւնը, ոչ պարծենալու, այլ հասարակութեան հասկցնելու որ իր առջեւը գտնուում է յեղափոխական գործերին մօտիկից ծանօթ միշտ տաճկահայ ժողովրդի հետ ապրած, և յեղափոխութիւնը տպրելու արեւստ չընդունող մի մարդ), պէտք է որոշեմ իմ բրոնած դիրքը և կատարած դերը մեր յեղափոխական գործունէութեան մէջ։

18 տարի է որ ես ծառայում եմ տաճկահայի ազատութեան գործին. 1890 թուականին եղել եմ Պոլսոյ Հնչակեան ներկայացուցիչ և մասնաճիւղի անդամ, շատ պատասխանատու դիրքով. 1895ին և 96ին Դաշնակցութեան Բալքանեան ներկայացուցիչ և Պոլսոյ գործերը վարող մարմնի անդամ, 1897—98ին Դաշնակցութեան Արեւմտեան բիւրոյի անդամ և Բալքանեան երկրների ներկայացուցիչ, 98—99ին Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչ և Բալք. կեդրոնական կոմիտէի անդամ. 1904ին, դարձեալ ընկերների բարոյական ճնշմամբ Բալք. կեդրոնական կոմիտէի անդամ. 1904ի ընդհանուր ժողովին մերժել եմ մտնել Լեռնավարի պատասխանատու մարմնի մէջ։ 18 տարուան գործունէութեան ընթացքում մի անգամ ազատուել եմ կախաղանի դատապարտումից. մէկ տարի եղել եմ մենակեաց բանտարկեալ Թուրքիայի և Ռուսիայի բանտերում, երեք տարի աքսորի եմ դատապարտուել մի հեռաւոր և անտանելի կլիմայով գիւղաքաղաքում։ Ամբողջ 18 տարուան մէջ կազմակերպութիւններէ յեղափոխութեան հաշուով ապրել եմ միայն երեք տարի ծախսելով միայն երկու հազար ռուբլի անձիս վրա և այդչափ էլ պաշտօնական ճամբորդութիւնների համար, և այսօր յեղափոխականների մէջ իբր բացառութիւն կամիմ բաւական խոշոր պարտքով։ Պաշտօն չունեցած միջոցիս միշտ մասնակցել եմ արեւմտեան և արեւելեան բիւրոների ժողովներին, նրանց աթոռանիստներում գտնուածս միջոցին, մասնակցել եմ 95. 98ի և 1904ի ընդհանուր ժողովներին. 1898ին հիմնել եմ «Շարժում» թերթը անընդհատ մաքառել հակայեղափոխականների դէմ. ձաղկել կազմակերպութիւնների թերութիւնները...

Ե. Դաշնակցութեան՝ երբեմն մութ ակնարկներով, երբեմն բաւական բաց իսկ 1904ի Մասունի վերջին կոտորածից յետոյ, Քրիստափորի ողջ և Բուլգարիայում գտնված միջոցին, սկսել եմ բացարձակ քննադատութիւն, կատարուելիք փոքրիկ կորստաբեր ձեռնարների առջեւը առնելու միակ նպատակով. և կազմակերպութիւնը վերջնականապէս դրախտ հիմերի վրա դնելու ցանկութեամբ։

Իմ այս դիրքը, անխնայ մերկացումները ի հարկէ գրգռում էին առաջուց և գրգռեցին վերջը մտավախ, պարզիտ և սիրող յեղափոխականներին հաճելի պղտոր կացութեան պաշտօնեաներին ու դիմակաթափ արեցին այն տիպերին. որոնք կազմակերպութեան մէջ չարունակ երկդիմի ինտրիգանների դեր են կատարել. զեկավարվելով միայն օրվան փչող հովերով, և զօրաւորների առջեւ սլքտալով, որոնցից կարելի է հաց և դիրք սպասել ու ստանալ։

Այդ հիւանդ գրգռման արդիւնք եղան իմ դէմ զրպարտութիւններ, դաւադրութիւններ, սպառնալիքներ կասեցնելու համար իմ սկսած գերազանցօրէն պարտադիր պայքարը, որոնք և ստիպեցին ինձ հրապարակով խզել յարաբերութիւններս արեւմտեան բիւրոյի հետ, ինչպէս առաջ խզած էի Բալքանեան կեդրոնական կոմիտէի հետ։ Նոյնանման պարագաներ ստիպեցին և թքել հեռանալ ժրաջան Լորիսին Պարիզից, Ու քանի Դաշնակցութեան մէջ կը տիրէ այս դրութիւնը դեռ շատեր կը հեռանան։ Ահա վեր յիշած տիպերի շարքում այսօր, շորս ոտքով, տեղաւորուում է արտասահմանում Բաբա—Գասպար իսկ Կովկասում Խաժակ անունով ծանօթ տիպը երբեմն յեղափոխական, երբեմն Ռէնիկ վարդապետեան, երբեմն մշակական, այժմ «Ցառաջ»ի խմբագրութեան անդամ. որին «Արշալոյս»ը ձօնեց «գրական մասխարա» տիտղոսը իսկ ես աւեցընում եմ «համոզումների և սկզբունքների Մասխարա»։

Իմ վերը յիշած քննադատականների և մերկացումների շարքում երեւան էի բերել այդ «մասխարայի» կազմակերպութեան թերութիւնները մատնանշող մի նամակը, որի մէջ նա դատափետում էր և ամենոփատ գոյներով ներկայացնում մի քանի դաշնակցական ընկերների, մանաւանդ հանգուցեալ Քրիստափորին, որին դեռ 1890 թուականից նոյն մտքով էր ճանաչել և մրնչեւ մեռնիլը բուռն ճիգեր թափել թէ նամակներով և թէ յօդուածով նոյնպէս ճանաչացնել տալ։ Մինչդեռ ես, յարաբերութիւնները խզվելուց յետոյ էլ (տեղի ունեցաւ Խաժակի մի ինտրիգան յօդուածի տպագրութեան պատճառով, որում այդ պարոնը գործ էր ածել մի ածական որ շատ առաջները մի վէճի միջոցին, երես առ երես ուղղած է եղել հանգուցեալին, որով և հանգուցեալին կարծել տուել թէ յօդուածը լոկ իրեն հարուածելու համար է գրուած և իմ նախօրօք գրտակցութեամբ) թէ ողջ և թէ մեռած միջոցին չեմ ուրացել հանգուցեալի արժանիքները ինչպէս և թերութիւնները որոնք փոքր չեն, եթէ դատենք յեղափոխական գործի օգտաւէտութեան տեսակէտից։ Համակրանք եմ յայտնել մանաւանդ վերջերս վտանգաւոր գործերի մէջ մտնելու միջոցներին յայտնի վկաների ներկայութեանը, հէնց այն օրերում երբ Խաժակը Շուշիից իր նամակով ճգնում էր սևացնել Քրիստափորին։ Եւ երկուսիս փոխադարձ յարաբերութիւնները այդ խզումից յետոյ եղել է ոչ իրար անարգելու հիմքի վրա,

(*) Ներկայ գրութիւնը առանձին թռուցիկով հրատարակուած է Փարիզ։
Ծ. Խմբ.

ընդհակառակը արժանիքները ճանաչելու մանաւանդ վերջին ընդհանուր ժողովի մէջ երբ մենք գործի պատճառով պարտաւորուած ենք եղել իրար հետ վիճելիրարու պատասխանել . . .

Այժմ Խաժակը իր չարաբաստիկ նամակը երեւան բերելուց գրեթէ մի տարի յետոյ, հիմնված Ֆիլիպէի յայտնի մարդկանց ուրոնց պարպիտական ծրագիրներին միշտ խոչնդոտ եմ եղել, զրպարտութիւնների վրա և հետեւելով աւանդական լայց ընսակար ասացուածին՝ թէ մեռածներին չպէտք է քննադատել, մեղայի է չոքում Քրիստափորի գերեզմանի առջեւ ուշ մնացած ինքնադատափետումի, զղջումի և ինքնագովութեան փետուրներով զարդարված հայհոյական մի նամակ «Ռազմիկ»ի 42 համարում տեղաւորելով, ինձ դրամաշորթ, մինչեւ իսկ գող հռչակելու յանկարծակի կատաղութեամբ բռնկած։ Այո, Խաժակը կոկորդիլոսի արցունքն աչքերին ծունկի է գալիս այն Քրիստափորի գերեզմանի առջեւ, որին ողջ ժամանակ, տասնեակ տարիների ընթացքում կեղծ, ամենանվնասակար, սիրող յեղափոխական էր ճանաչում և ճանաչեցնել ձգտում։ Բայց ո՞վ հաւատաց այդ արցունքին և մեղային։ Ո՞վ չէ համոզված որ Խաժակի հոգու մութ խորշերում միայն ուրախութիւն է տիրապետում Քրիստափորի մահուան պատճառով, որովհետեւ եթէ Քրիստափորը ողջ լինէր, Դրօշակի խմբագրութիւնից խստիւ վտարված, Վիշապում լքուած, Շուշիում տանջելիօրէն արհամարված, որտեղից և գրեց տըխրահռչակ նամակը, և իր խաչեղբայր Բենիկի գիրկը ընկնող Խաժակը այսօր «Ցառաջ»ի խմբագրութեան սեմը անգամ չէր տեսնի։

Այս տեսակէմի մարդի հայհոյանքներին չեմ պատասխանելու հարկէ։ բայց դրամական խնդրին վերաբերեալ մեղադրանքներին կը պատասխանեմ, հէնց այն պաշտօնագրով որով, ինձնից դաժանօրէն արհամարված մարմինը, ոչ Խաժակի լրբութեամբ նոյն իսկ մեծապատիւ տիտղոսը տալով, որ չէ կարելի և չէ տրուում դրամ շորթողներին մանաւանդ յեղափոխական մարմինների կողմից, հրաւիրում է բացատրութիւններ տալու այդ խնդիրների մասին, գործածելով իւրացնել բառը։ իսկ իմ ըմբռնումով չը յանձնել։ որովհետեւ աշխարհիս բոլոր չիտակ մարդոց աչքում, երբ մարդը ինքը հրապարակով իր թերթում, իր ստորագրութեամբ կազմակերպական Օրգանից ամիսներ առաջ, հակառակ Արևմտեան Բիւրոյի արգելումին, յայտարարում է դրամների իր մօտ լինելը, չը յանձնելու պատճառները և միայն ընդհանուր ժողովին յանձնելու որոշումը, «նա դրամ իւրացնող չէ։ այլ գոյութիւն ունեցող մարմինների վրա վստահութիւնը կորցրած և գիտակից մի ըմբոստ» անդամ գործիչ։

Ահա այդ պաշտօնական հրաւիրագիրը։

Բալք. կեդր. կոմիտէ 1906 Փետր. 28
ԲԱՂԱՔ . . . Թիւ 384

«Մեծապատիւ պ. Իսագ Արվախի (Վարդօ) Հայ Յեղ. Դաշ. Պալք. շրջանական ժողովը պիտի գումարի մարտ 26 ին . . . . մէջ։ Կազմական կանոնների 120 րդ. յօդուածին տրամադրութեան համաձայն՝ կը հրաւիրենք ձեզ ներկայանալ և ձեր իւրացուցած կազմակերպական դրամներու մասին բացատրութիւններ տալ ժողովին։

(կնիք Պ. կեդր. կոմիտէի)

Այս հրաւիրագիրը պաշտօնապէս փաստում է որ ոչ մի Դաշնակցական մարմին և անհատ իրաւունք չունի ինձ կեղտոտութեան մէջ մեղադրելու առանց ո և է ատեանի, իմ բերանացի և երես առ երես տուած բացատրութիւնների վրա հիմնված, որոշումի։

Ո՞վ կարող է երաշխաւորել թէ իմ բացատրութիւնները ինձ չեն արդարացնի ու դատապարտել չեն տայ այս անախորժ կացութիւնը ստեղծող օրինազանց մարմիններին և ինտրիգաններին. հակառակ պարագայում ուրեմն պէտք է ընդունել որ Դաշնակցութիւնը կամ պարպիտ հակառակորդները իմ խնդրի վերաբերմամբ ուզում են ղեկավարվել Սուլթանի ռէժիմի ոգիով . . .

Այդ հրաւէրին ես դրական պատասխան եմ տուել, առաջարկելով կազմել մի քննիչ յանձնախումբ միայն բացատրութիւնները լսելու համար, հաստատելով դրամների խնդիրը կարգադրելու ընդհանուր ժողովի հետ որոշմանս վրա. որովհետեւ իմ նպատակն է վերջապէս որ գոնէ վերջին ընդհանուր ժողովում բոլոր դաշնակցականները կանոնաւոր և փաստացի հաշիւ ներկայացնեն պարզաբանելու և ստուգելու համար այս տասնեակ տարիների մութ մնացած բոլոր հաշիւները, և համոզված եմ թէ ամեն մի սրտացաւ և Դաշնակցութեան հաշիւներով իրօք հետաքրքրուող հայ գոհ կը մնայ՝ իմ բռնած այս դիրքից։

Կարճը՝ ես գիտակցաբար նախադէպ եմ ստեղծում, հէնց ինքս, հին գործիչս ստոյգ գաղափար կազմելու համար բոլոր ստացած ծախսած գումարների մասին, որից մինչեւ այսօր զուրկ եմ եղել հակառակ գործերին այդքան մօտիկ լինելուս և ազդեցիկ դիրք ունենալուս։ Ու իմ այս նպատակից չեղել չեն կարող ինձ ոչ դաւերը, ոչ զրպարտութիւնները, ոչ սպառնալիքները, ոչ մանկական բոյկոտները «Շարժումի» և իմ դէմ։

Թրքական դատարանի առջեւ պարտաճանաչ և հայ տառապանքը խստիւ փաստող հայ յեղափոխական գերապանծօրէն պարտաճանաչ պէտք է լինի և դէպի իր ժողովուրդը, նրա ճակատագրի հետ խարսնող յեղափոխական կազմակերպութեան դուռն ու ծուծը, երեսն ու առտառը իրապէս որոշելու համար ու ես կատարում եմ և այդ պարտականութիւնը։

Ուրեմն, Բարձր. Գաղտարխաժակ, քանի որ ես ձեզ վկայ եմ բերել, ձեր նամակովը, իբրեւ կազմակերպութեան թերութիւնները մատնանշողի. ոչ թէ դրամը չը յանձնելու համախոհի, որից այդպէս յեղապատառ և ծնկայոր մեղայի գայով հրաժարվում էք. կարո՞ղ էք հերքել. այդ նամակը, ձեր յօդուածը, ձեր ուրիշ նոյն ոգով նամակները. որոնք հեռատեսութեամբ պահված են ձեր 36 ի ժրնէվի բիւրոն կազմող Ռոստոմի և Յոզեանի դէմ դաւեր սկսած օրից կասկածի ենթակուելուդ պատճառով. երբ ձեզ հալածում էին, յօդուածդ իսկ չէին ընդունում ու դուք մեզ մի քանի գործիչներիս ուզում էիք նրանց դէմ գրգռել։ Ա՛յն ծանր օրերում երբ ձանձրացած քոքարոյական անտանելի և ճնչված կացութիւնից հագի։ կարողացայ անձնական երաշխաւորութեամբ քեզ տեղաւորել տալ Եգիպտոսում։ Կարճը—կարո՞ղ էք որոշ կերպով պատասխանել թէ նամակները. յօդուածները գրած եւ բերանացի դանդատներդ արած միջոցին ո՞վքեր էին մեղաւոր, ձեզնից դատափետողները թէ դո՞ւք։ Ո՞վքեր էին վատ, ամենանվնասակար, սիրող յեղափոխական, ձեզնից հռչակուածները, թէ դո՞ւք։

Մի՞թէ հասուն, ուսում առած կեանքի չարն բարին ճանաչող մարդը կարող է տասնեակ տարիներով սխալուել։ Ինչո՞վ կարող ենք երաշխաւորուել, ղեկավարվելով ձեր սիոտէմով, որ դուք այսօր տուելի մեծ սխալ չէք գործում, գիտակցօրէն հացի խնդրի ճնշման տակ, ինչպէս գրում էիք ձեր 1904ի նամակում, ձեր «Մշակ»ի խմբագրութեան մէջ մտնելը և Բենիկի գիրկը ընկնելը իբր թէ արդարացնելու մտքով։

Ասացէք, ի՞նչ գնով մեղայի եկաք։ ձեր 15 տարվան համոզումները ի՞նչ գնով փոխուեցին. «Ցառաջում» փայլելու, երբեմն, երկար տարիներ չնչին, անպէտք համարուող մարդկանց կողքում փայլելու գնո՞վ, թէ աւելի սո՞ւղ..

Ձեր երեւան բերուած նամակը ձեզ պատին սեղմեց։ Անշուշտ կացութիւնը պահպանելու շահ ունեցողները այս կտրուկ դիլեման դրին փոսն ընկած աչքերիդ առջեւ։ —«Կա՛մ ստորնութիւնը ունեցիր 15 տարվան համոզումներդ և քարոզածներդ ուրանալու, ուրանալու նաև Վարդօյին և լրբօրէն հայհոյելու, կամ դուրս «Ցառաջ»ից վերապրելու ծնէվի, Շուշիի, Վիշապի և նոյն իսկ Թիֆլիզի արհամարված, լքված, դառն կեանքդ . . Երկու պայմաններն էլ ստորնացուցիչ էին, դուք ընտրեցիր առաջինը անելու համար այս վոլտ ֆասը, որովհետեւ քոամբողջ հոգեբանութիւնը դառնում է սին, երեւակայական փառքի, փայլումի չուրջը, որի համար ինչպէս երեւաց ամեն զոհողութեան պատրաստ ես մի քիչ աչք ծակող դերասանական ձեւեր ընդունելով....

Ախ դու այր Կարմէն, բայց երբէք չը մոռանաս որ կին Կարմէնները երբեմն կարող են սիրելի լինել, իրենց գոնէ մալմնով հեռատաքրքրուողների համար, բայց այր Կարմէնները միշտ և ամեն տեղ զըզուելի են....

«Շարժումի» Տէր և Խմբագիր
ՎԱՐԴՕ

1906 Մարտ 26
ՊԱՐԻԶ

ԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԸ

Կովկասէն կրկին սկսան չարաշուք լուրեր հասնիլ. մեծադղորդ համագումարները, պատգամաւորներու տաք վիճաբանութիւնները, խափած պերճախօսութիւններին բոլորովին պարապ օդը ցնդեցան. համագումարին ցրուելովը՝ ցրուեցան նաեւ խաղաղութեան ու հաշտութեան յոյսերը. Գանձակ ու Շուշի նորէն արիւնի օրեր կապրին, Կովկասի ամէն կէտին վրայ արդէն օր չանցնիր որ թաթար խումբ մը անարգ սպանութիւններ չի կատարէ։ Ու մանաւանդ մեծագոյն չարիքը հոն է որ, խաղաղութեան ու հաշտութեան խօսքերով կառավարութեան պաշտօնեաները հայոց զէնքերը հաւաքելէ ետքը, այսօր զանոնք բա-

ցարձակապէս վայրենիներուն ձեռքը կը յանձնեն, ու ոչ միայն չեն պաշտպաններ զանոնք այդ աւազակներու դէմ, այլ նոյնիսկ կարգիլեն որ խեղճերը ին զինքնին պաշտպանեն։ Երբ ոևէ կէտի մը վրայ հայ կոտրիճները յաղողին թաթարները ետ մղել, կամ փառաւոր հարուած մը տալ անոնց, իսկոյն կառավարութեան զօրքերը կը հասնին ու «տպրստամբ» ազգին «սեպարատիստ» ձգտումները չի քաջալերելու համար, կսկսին հալածել հայերը։ Այնպէս որ պարզապէս երկու սուրի մէջ կը չայշարուին մեր Կովկասահայ եղբայրները։ Մէկ կողմէն թաթար խուժանը կը ջարդէ, կը թալէ ու կը հրդեհէ, միւս կողմէ ռուս բռնապետութեան պաշտօնեաները կը հալածեն, կը ճնշեն, կը հարստահարեն զայն։

Եթէ այս ընթացքը շարունակէ երկարիլ, պարզապէս յուսահատական պիտի ըլլայ հայերուն համար։ Ինչպէս կը տեսնուի, կառավարութիւնը դեռ իր հին թաքթիքին կը հետեւի, ու միշտ ճիզուիթութիւններով խոյս կուտայ հայոց պահանջները կատարելէ։ Վօրոնցով—Տաշքով կատարեալ գայլ մը եղաւ մեզի համար, Կալիցիներէն ալ վտանգաւոր։ Այս վերջինը գոնէ ռուս պիւրոքրացիային լիրբ վայրենութեամբը կը գործէր, մինչ դեռ Տաշքով աւելի նրբացած մաքիավէլականութիւնով։ Ռուսահայերը ինչո՞ւ դեռ ինքզինքնին կը խաբեն այս փոխարքային գզուելի սճապարարութիւնով, ի՞նչու չեն պահանջեր իր մէ այլեւս բացարձակապէս որոշ ըլլալ, և գիտնալ որ, եթէ իր բաղձանքը արդարեւ Կովկասի խաղաղացումն է, ի՞նչու կը խուսափի զայն խանգարող թաթար աւազակները հալածելէ, և կատաղորէն կը ջանայ խեղդել ամէն ինքնապաշտպանութեան շարժում հայերուն մէջ։

Մ.

ՏՈՒՐՆՈՎՈՅԻ ՑՈՒՇԱՏԵՏՐԸ

Ռուսական թերթերը ներքին գործոց նախարար Տուրնովոյի յուշատետրը կը հրատարակեն, ուր ան արձանագրած է օրը օրին իր տպաւորութիւնները. թէ ինչպէս կրցեր են զայն ձեռք ձգել, յայտնի չէ մեզ. որպէս հետաքրքրաշարժ, աւելորդ չենք համարեր քանի մը հատուածներ քաղել, պատասխանատուութիւնը թողլով զանի հրատարակող ռուս թերթերուն։

* * *

17 Հոկտեմբեր. — Ի՞նչ է այս. Սահմանադրութիւն, սոսկա՛լմ. — Անոնք հայրենիքը պիտի ծախեն. ահ, այս Վիթէն. թէ ես ըլլայի, զանի Սիպիր կ՚աքսորէի տաժանակիր աշխատութեան. պէտք է որ Թրէքովի մօտ երթամ։

Գացի ու զինքը բարկացած գտայ։

— Ամենուն ալ պիտի հասկցնեմ— գոչեց նա—թէ Ռուսիան Սահմանադրութիւն չուզէր. պիտի հասկցնեմ։

Տեսնենք պիտի յաջողի Ամէն պարագայի մէջ պէտք է որ Վիթէի մօտ երթամ։

Նպաստաւորումի համար ազերսագիր տուի։ Հիմայ ամէնքն ալ դրամական օգնութիւն կը պահանջեն, հարկ էր որ ես ալ աճապարէի։ Վաղը ամէն ինչ հէքեաթ մը կրնայ համարուիլ։

* * *

18 հոկտեմբեր.— Կէս օրէն վերջ ժամը 4-ին հասարակութիւնը ցոյցեր կընէր. ցուցարարներու թափորը անցաւ նոյն իսկ իմ պատուհաններուս տակէն։ Հարիւրաւոր կարմիր դրօշակներ օդին մէջ կը ծածանին։ Նայեցայ և չը կրցայ հաւատալ տեսածիս։ Պէտք է որ 30 000 բուպլիի դրամական օգնութիւնը ստանալու համար աճապարեմ—գումար մը, որ փողոցը չը գտնուիր։ Գաղտնապէս Թրէքովի մօտ գացի, զանի շատ հանդարտ ու չը յուզուած գտայ։ Զիս տեսնելուն պէս ուրախացաւ։ Ինչ պիտի ընէ—Աստուած միայն գիտէ։ Այս իրիկուն գաղտնապէս Վիթէի մօտ ալ գացի։ Սահմանադրութեան և նոր կազմուելիք նախարարական դահլիճի մասին խօսեցանք Վիթէն յօդացաւէ կը գանդատէր։

Բան մը չեմ հասկնար։ Երբոր տուն վերադարձայ, սեղանիս վրայ Բոպէտոնոսցէվի մէկ ծաղրանկարը գտայ. Սոսկում։ Այնպէս մը կուգայ ինձ թէ լեռները պիտի փլչին։ Օ՛, պէտք է որ նպաստաւորումի համար շտապեմ։

Բոպէտոնոսցէվի մօտ գացի. ցաւակցութիւնս յայտնելու. սակայն ա նոր տան առջեւ չատ բազմութիւն կար խռնուած, որ անդադար կը պոռար ու կը սուլէր։ Հազիւ ես ալ կրցեր էի ազատիլ։

* * *

19 հոկտեմբեր։— Բոլոր գիշեր յօրինեցի ու վերյօրինեցի երկու առաջարկագիր. մէկը մուժիկներու համար, սահմանադրական բարենորոգումները օր առաջ իրագործելու և միւսը խուլիքաններու կազմակերպութեան համար. Ռուսիան պահպանելու և զանի անկումէ մը փրկելու նպատակով։ Երկու առաջադրումները Թրէքովին ղրկեցի։

Ետեւէ ետեւ մթթինկներ կըլլան. Գրողը տանի. Սակայն այսպէս երթալով, մինչեւ ո՞ւր պիտի հասնի ծայրը։ Սարսափելի է սարսափելի, խեղճ Բոպէտոնոսցէվ այսքան ծաղրանկարներ անոր գլխին վրայ թափուած։ Թէ Բլէվէն ըլլար. նա հրովուսուրով յեղափոխութիւնը կը խեղդէր։

Նոյն իսկ կառավարական լրագիրը յեղափոխական եղած է։ Խորամանկ Վիթէն ամենէն ալ համբերութիւն կաղերսէ։ Ասի կը հաւնիմ Միայն թէ ինձի օր առաջ խնդրուած դրամական օգնութիւնը տան։

* * *

20 Հոկտեմբեր.— Առջի օր լուր առի թէ՝ ամբողջ Ռուսաստանի մէջ կը բողոքեն. հրէաները կը ջարդուին, ինչպէս նաև զարգացած դասակարգը։ Կե՛ցցէ՛, արթնցաւ և ոտքի կանգնեցաւ ուղղափառ Ռուսիան։

Հիմայ ինձ այնպէս կը թուի թէ՝ Թրէքովը կը հասկնամ. Խելացի մարդ. անոր միայն վայել էր ոստիկանութեան նախարար ըլլալ։

Պէտք է որ նոյն իսկ այսօր անոր մօտ գնամ։ Ինչո՞ւ համար ամէն բան առանց ինձի կը գործադրեն։

Նոյն օրը.— Թրէքովի մօտ գացի, և զինքը զբաղուած գտայ Տուն վերադարձայ, ու յոգնած ըլլալով, քնացայ։ Երազեցի թէ՝ դրամական օգնութիւնը ստացած եմ—գեղեցիկ երազ։ Երբոր արթնցայ իմացայ թէ Գլայկէլսը պաշտօնանկ եղած է— խե՛ղճը —կը զգամ թէ ցնդեր եմ։

Այս գիշեր կոմսուհի Կ.ի տունը գացի, ամենքն ալ յուսակտուր գտայ։ Կը պատմէին թէ՝ արդէն ընդհանուր ներման հրովարտակը ստորագրուած է։ Կոմսուհին, դառնագին կարտասուէր. կարծելով թէ ներման տրժանացողները զինքը կը սպաննեն։

Կըսէին թէ Վիթէն իյնալու է։ Գացի անոր մօտ, ու զինքը շատ հանդարտ գտայ, նա երգ մը կը մըրմրար։ Իր սեղանին վրայ սահմանադրութեանց և հեռագիրներու կոյտ մը կար դիպուած։ Հարցուցի իրեն թէ այս ամէնը ի՛նչ կը նշանակէր—«նոր շարժումմ» ծիծաղալից նա ինձ պատասխանեց։

* * *

21 Հոկտեմբեր — Սոսկալի օր։ Ներման հրովարտակը հրատարակուած է։ 30 000 բուպլիի չէքը ստացայ, եւ անմիջապէս Լօնտօնեան պանդը փոխանցեցի. աւելի ապահով է։

Միլիօնաւոր փոփոխումներ—հարիւրներով թափուր մնացած պաշտօններ։

Փողոցներու մէջ խսկի յեղափոխութիւն։ Սահմանադրութեան յատակագիծը կարդացի—սոսկալի բան; Թրէքովի մօտ չեմ երթար, անոր գործը բուսած է։ Այլեւս լրագիրները չեմ կարդար, որովհետեւ երբ զանոնք կը կարդամ. մազերս ցից ցից կըլլան։

* * *

22 հոկտեմբեր.— Վաղը Մոսքվայի յեղափոխականները ուռնկոդրութեան պիտի ընդունուին։

Վիթէն շատ մեծ կորով ցոյց կուտայ։

Այս յեղափոխականները (Զէմսդվոներու անդամներ) վերջնագրով մը եկած են կըսեն։

Բարկութիւնս կուգայ երբ զանոնք այդպէս հպարտ կը տեսնեմ. սակայն հետերնին ոիրով էի, էհ, չեռ գիտեր թէ ի՛նչ կրնայ պատահիլ։

Տա՞յ պիտի Աստուած որ այս ամէնը անցնի

— Այն ժամանակ պիտի տեսնենք թէ անոնք ի՛նչ պիտի երգեն։

Գրոնչդատը բոցերու մէջ է։

Գացի Վիթէի մօտ տեսնելու թէ ինչպիսի տպագրուած սահմանադրութիւններ կը գտնուին անոր մօտ. պէտք է որ զանոնք կարդամ։ Թրէքովի մասին կը խօսի. որպէս իր ամենաանկեղծ բարեկամը։ Ե՞րբ փլա-

---

Ֆաբուչինեան վանք, 27 սեպ. 1868

Երբեք հաւատք չեմ ունեցած գիւղական քահանաներու կոչումին անկեղծութեանը եւ միշտ այնպէս մտածած եմ որ քահանայ եղած են աղքատութենէ ստիպեալ։ Քահանայութեան արհեստը հրապուրիչ մանաւանդ ծոյլերուն համար, որոնք կոչտ վայելքներով լի կեանք մը կերազեն առանց աշխատելու առանց զոհողութեան. սնափառներուն, անարժան զաւակներու համար, որոնք գործաւորական պլուզէն չեն ախորժին ու կուրանան իրենց կորաքամակ հայրերը։ Անոնց համար սրբութիւնը թեմին հարուստ քաղքենին է իրենց առջեւ խոնարհողներու բարեւը հը պարտութեամբ ընդունիլը։ Եթէ այս տխուր գիւղացիներէն շատերը հարուստ ծնած ըլլային. վայրկեան մը իսկ մտքերնուն պիտի չանցնէին կրօնաւոր ըլլալը, եւ, օր մը եթէ յանկարծ հարստանան, ամէնքը մէկանց կը ձգեն իրենց կարգը։ Կուզեմ փայլուն ու հրապարակային ապացոյցը տալ ասոր։

Իմ այս կտակս այդ ապացուցման պիտի ծառայէ։

Մահուանս օրէն սկսեալ կարգը ձգող առաջին քահանային կը կտակեմ իմ բոլոր ստացուածքս, չարժուն թէ անշարժ. որ հետեւեալներն են։

1 Տունս իր պարագաներով եւ մէջի բոլոր կարասիներով, բացի մատենադարանէս։

2. Երեքհազար հինգ հարիւր ֆր. եկամուտ, զանազան արժէթուղթերէ գոյացած՝ որոնց ցանկն ու թուղթերը կը գտնուին Վիթէի նոտարին մօտ։

3. Կանխիկ դրամ, քուրօն, պահանջք եւն, որոնք մեռած օրս քովէս պիտի ելլեն։

Տարակոյս չունիմ որ այս կտակիս պարունակութիւնը հրատարակուելուն պէս հազարաւոր քահանաներ պիտի փութան կարգերնին թողուլ ու գալ տունս, եկամուտներս, դրամս, կահկարասիներս պահանջելու։ Ուստի կտակատարիս վրայ պարտք կը դնեմ հսկելու որ առաջին կարգաթողը ճշտիւ ու որոշապէս հաստատուի Ասիկա առիթ մը պիտի հայթայթէ ատելութեանց, վայրագ նախանձի, անարգ ստախօսութեանց, ստոր կիրքերու տարափի մը պոռթկալուն, որոնք պիտի կարողանան մեզի պարզել թէ ի՞նչէ կը բաղկանայ քահանայի մը հոգին։ Եթէ այնպէս պատահի որ, քսան, յիսուն, երկու հարիւր քահանայ մէկէն միեւնոյն օրը կարգաթող եղէր են. վիճակով պէտք է որոշել թէ որո՞ւ պիտի վերաբերի իմ այս ժառանգութիւնս զոր ազատօրէն ու հաճութեամբ կընեմ;

ԱՊՊԷ ԺԻԼ

ՄԱՍ Բ

(Հատուածներ)

Տէրվէլ ընտանիքը, որ արբային ժառանգորդներէն կազմուած էր, նոտարին սենեակը հաւաքուած էը, ուր պիտի կարդացուէր հօրեղբօրս կտակը։ Նոտարը նախ մեզի ցցուց մեծ պահարան մը դեղնած, քառակուսի, հինգ տեղէ կնքուած կանանչ մեղրամոմով եւ վրան գրուած. «ասիկա իմ կտակս է»։ Ցետոյ դիտել տուաւ թէ կնիքները անաղարտ մնացած էին, զանոնք աւրեց։ պահարանը բացաւ ու մեջէն հանեց ծալուած թերթ մը թուղթ եւ սկսաւ կարդալ, ծանր ու հանդիսաւոր ձայնով մը, հետեւեալ տարօրինակ կտակագրութիւնը.

տակ պիտի ըլլայ այս չտես ջոջը (բոնոնոս)։ Ինձ այնպէս կը թուի թէ, նա, Վիթէ, և անիշխանականները մտածեցին այս ամէնը, որպէսզի ձեռք ձգեն Տիգթաթուրա։

Սակայն այս ամէնը ե՞րբ վերջանայ պիտի. . . . . .

Թարգմանեց Զ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վեհ. Հայրիկը Ընձակ վարդապետը ղրկած էր հովուելու Սիպերիոյ եւ Մանչուրիոյ երկաթուղիներուն վրայ հաստատուած հայերը։ Ընձակ վրդ. Խարպին հասնելով՝ առաջնակարգ պանդոկի մը սրահը մատուռի վերածելով, հայ ժամերգութիւն կատարեր է ի ներկայութեան տեղւոյն հայ գաղութին, որ 200 հոգիէ կը բաղկանայ եւ յորդորական քարոզ մը խօսեր է անոնց, որոնցմէ շատեր 10—15 տարիէ ի վեր հայ ժամերգութիւն չեն լսած եղեր։ Արարողութենէն ետք պանդոկին մէջ ճաշկերոյթ մը տրուեր է, ու յետոյ ծանօթ երգիչ արուեստագէտ պ. Կոստանեան տգգային ու եւրոպական զանազան կտորներ երգեր է։

—Եգիպտահայ թերթերէ կը տեղեկանանք թէ Փարիզի մէջ, եւրոպական ապրիլ 9ին մեռեր է տիկին Նուպար փաշա։

—Գերմանացի հայասէր բրօֆ. Լէբսիուս, որ պուլկարահայոց ալ մոտէն ծանօթ է, այժմ Եգիպտոս գացած է, ուր զերմաներէն ատենախօսութիւն մը ըրած է հայերուն համար։ Պատ. Աւետարանեան հայերէն թարգմանի պաշտօն կատարեր է։

—Տարօրինակ հայ խաչագողի մը շահատակութիւնները պատմող թղթակցութիւն մը ստացած ենք Լօնտոնէն, զոր յաջորդ թուով պիտի հրատարակենք ամբողջութեամբ։ Այդ խաչագողը ինքզինքը եպիսկոպոս պատրիարք ամենայն հայոց ճանչցնելով, վարդապետ կոչէ եղեր ամէն ազգէ իրեն ներկայացողները, եթէ 3 անգլիական ոսկի վճարեն, եւ անոնց կուտայ եղեր մասնաւորապէս պատրաստուած վկայաթուղթ մը, վարդապետ օծուած ըլլալուն համար։ Անգլերէն «Մօրնինկ Լիտըր» թերթը այդ վկայաթուղթին ֆաք—սիմիլէն հրատարակած է, զոր փափագողները կրնան տեսնել խմբագրութեանս քով։

Մեր թղթակցին թողով այս տարօրինակ խաչագողին մանրամասնութեանց պատմութիւնը, կը հրաւիրենք մեր կրօնական վերին իշխանութեանց ամենայնուրջ ուշադրութիւնը այս խաչագողին շահատակութեանց վրայ, եւ կը յուսանք թէ չուտով առաջքը կառնուի հայ կղերական անունին ու տարազին տակ կատարուող այս խայտառակութեանց։

—«Էվնինկ Սթանտառտ» կովկաս Զունկարի քաղաքը բնակող բժշկի մը նամակը հրատարակած է, ուղղուած Լօնտոն բնակող իր ծնողքին, որով կը պատմէ հայերու եւ թաթարներու միջեւ վերջերս տեղի ունեցած կատաղի կռիւին մանրամասնութիւնները։

«Ամէն օր, կը գրէ նամակագիրը. թաթար աւազակախումբեր կը յարձակին հայոց վրայ։ Գրեթէ միշտ կառավարական գործակալները եւ ոստիկանները թաթարները կառաջնորդեն։

Դեռ երկու օր առաջ, թաթարները մեծ թուով շրջապատեցին Զունկայուն եւ սկսան ոմբակոծել հայկական թաղը։ Կռիւը յամառ ու կատաղի էր։ Բազմաթիւ ժամեր պաշարուողները մեծ քաջութեամբ ինքզինքնին պաշտպանեցին, թշնամւոյն վրայ սարսափելի կրակ ընելով։ Բայց թաղը կրակի տրուած ըլլալով, շատեր տունները ձգեցին ու սկսան յուսահատական կռիւ մղել, շատերն ալ յամառեցան պատուհանին առջեւ մնալ ու փլատակներու տակ թաղուիլ։ Փողոցները զինեալ կիներ թաթարներու վրայ կրակ կընէին կամ անոնց վրայ կը յարձակէին դաշոյնով։

Իրիկուան մօտ հայկական թաղը բնաջինջ եղած էր թշնամիներուն թուական առաւելութեան պատճառաւ։ Հարիւրաւոր դիակներ կիներու, տղոց, ու մարդոց փողոցները փռուած էին։ Այս բոլոր դէպքին միջոցին, ոստիկանութիւնն ու զօրքը հեռու մնացին եւ ականջ չի կախեցին հայոց օգնութեան աղաղակներուն։ Նոյնանման ջարդերու լուրը կը հասնի նաեւ Անտաշի եւ ուրիշ տեղերու համար»

—Կիրակի օր քաղաքիս մէջ մեռաւ, Սարգիս Գուլումճեանի վաճառատան նախկին պաշտօնեաներէն Հայկ Գրիգորեան, ազնիւ ու պարտաճանաչ պաշտօնեայ մը, զոհը իր խղճամիտ ծառայութեան... հանգուցեալը բարի սիրտ մը կը կրէր եւ միշտ կօգնէր իրեն դիմող երիտասարդներու, կամ անոնց գործ հայթայթելով կամ թէ միջոցներ տալով։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պարսկա—Թրքական հարցը փոխանակ յարդարուելու հետզհետէ կը վատթարանայ։

Պարսիկ կառավարութիւնը իր դիւանագիտական յարաբերութիւնները խզել կը սպառնայ, թէեւ Պոլսոյ պարսկական դեսպանութիւնը այս շրջող լուրը կը հերքէ։

— Ահմէտ Մէֆիք պէյը, Խրտիվի քաղաքական դիւանագիտական դահլիճի վերատեսուչը, որպէս ճանապարհորդակից Պոլիս կերթայ Խրտիվի մօր հետ միասին. կըսուի թէ Ահմէտ խնդրի մասին, նա գաղանի հրահանգներ ունի Սուլթանին ըսելիք։

—Լոնտոնեան դրամատան մը յայտնութիւններու հետեւանօք, Պոլսոյ ոստիկանութիւնը երեւան բերած է արուեստանոց մը, ուր Թրանսվալի արժէթղթերու կեղծերը կը յօրինեն եղեր. կեղծարարը Կիւպէքա անուն անձ մ'է. Նա ձերբակալուած է. կեղծարարը և անոր ընկեր Տիգրան Թարպասեանը այս կեղծ արժէթղթերով փոխառութիւններ կընեն եղեր. Պոլսոյ հրապարակի վրայ այս արժէթղթերով 600.000 ֆրանքէ աւելի դրամ կայ շրջուած. կը կարծուի թէ այս արժէթղթերէն եւրոպական հրապարակներու վրայ ալ կայ տարածուած. կեղծը իսկականէն շատ դժուարին է զանազանել.

— Մակեդոնիոյ երեք նահանգներու վերաքննիչը տաճկական կառավարութեան առաջարկած է որ, հրովարտակ մը հանէ ու մակեդոնական մէն մի գիւղը պատասխանատու բրնէ, եթէ երբէք խռովարարական շարժում մը կամ սպանութիւն պատահի հոն. Եւրոպական դեսպանութիւնները դիտել կուտան որ եթէ երբէք մի այսպիսի որոշում առնուի, նա ամենէն շատ պուլկարական գիւղերու համար պիտի ըլլայ, ու այսպէս անոնք կանոնաւոր հալածանքի պիտի ենթարկուին.

— Պոլսէն կիմացնեն թէ Անգլիոյ թագաւորին Աթէնք երթալը շատ վատ ազդեցութիւն ներգործած է Սուլթանի վրայ, որովհետեւ ինչպէս յայտնի է Անգլիոյ թագաւորը երբէք պատրաստակամութիւն ցոյց տուած չէ Սուլթանին այցելութեան գնալ.

— «Բրէօյսիշէ Օրիէնդ—Գորէսբոնտէնց» լրագիրը հաստատ աղբիւրէ կիմանայ թէ Պուլկարիոյ նախարարապետ Բէդրովը այցելելու է բոլոր եւրոպական արքունիքը. սկսելով Վիէննայէն, Պուլկարիան թագաւորութիւն հռչակելու համար, դիմումներ ընելու. թէեւ այս լուրը հաւանականութիւն մը չունի, սակայն Եըլարզի մէջ մեծ իրարանցում յառաջ բերած է.

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկէն կիմացնեն. Վիթէի նախագահութեամբ, Ցարսկոէ սէլօի մէջ տեղի ունեցաւ նախարարական խորհուրդ մը, ուր ներկայ էին բոլոր նախարարները և կոմս Սոլսկին։

Այս նախարարական խորհրդի մէջ հարց է ծագած, թէ ա՞րդեօք կառավարութիւնը բաւականի պատրաստուած է Տուման գումարելու համար, իսկ եթէ ո՛չ, գումարումը յետաձգուի։

— «Ցայդ» լրագիրը Բեթերսպուրկէն կիմանայ թէ՝ Կոստուտարսդվէնն Տումայի գումարումը պիտի յետաձգուի; Լուր կը չրջի նոր ընտրութիւններ կատարելու համար, եւ այսպէս իրաւունք տալ ընդհանուր ձայնատուութեան։

ՖՐԱՆՍԱ

Գործադուլը կը շարունակուի։ Գործաթողներու և բանակի միջեւ տեղի կունենան ընդհարումներ։ Ներքին գործոց նախարար Գլէմանսոն զինուորական նախարարի հետ խորհրդակցած է կարգապանութիւնը կարեւոր պահելու մասին. Սակէ ետքը նախարարը առանց հետեւորդի այցելած է վիրաւորեալները որ հիւանդանոց փոխադրուած են. Ընդհարումներու ժամանակ սպաննուած տեղեկալ Լաթուրի յուղարկաւորութիւնը մեծ շքով կատարուած է. Զինուորական նախարար պ. Էթիէնը որ յուղարկաւորութեան ներկայ էր, Լաթուրի դագաղին վրայ «Էէժիօն ա՛օնէօրի» պատուանշանը դրաւ. աւելցընելով տեղեկալ Լաթուրը կը մեռնի իր պարտականութիւնը կատարած ժամանակամիջոցին.

- Բատիւմը գտնող գիմիագէտ Գիւրի-ն Տօֆին փողոցէն անցած պահուն կառքի մը տակ մնալով մեռած է.

ԳԵՐՄԱՆԻԱ

Իշխան Պիւլովի գլխաւոր օգնական պ. Հոլշտայնի հրաժարականը Վիլհէլմ կայսրը ընդունած է.

— Երբեակ նիզակակցութեան հիմքը հետզհետէ կը խախտի. Վոսիշէ Ցայթունկ» լրագիրը Իտալիոյ վրայ խօսելով այսպէս կըսէ. «Գերմանիան ուժով է, նա բնաւ չահ մը չունի, նիզակակից մնալ այն կառավարութեանց հետ, որոնք բոլորովին տարբեր կերպով կ'ըմբռնեն իրենց ստանձնած պարտականութիւնները. Աւելի լաւ կըլլայ որ Գերմանիան միայնակ կռուի, քան թէ այսպիսի նիզակակիցներու ձեռնտուութիւնով».

— Բայխսդակի գումարումները վերսկսելու են. Առաջին նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ երեքշաբթի օր.

ԱՆԳԼԻԱ

Անգլիական կառավարութիւնը որոշած է իր եգիպտական բանակը զօրացնել.

—"Տէյլի Թէլէկրաֆ" լրագիրը կիմանայ թէ Թիպէդի մէջ ապստամբութիւն ծագած է. չինական զօրքը յաղթուած է.

—Ցունաստանի կէօրկիոս թագաւորը՝ Անգլիոյ վեհապետ Էտուարդը, յունական նաւատորմիղին ծովակալ անուանած է.

Անգլիոյ թագաւորը Ողիմպիական խաղերը կայցերէ.

ՃԱՊՈՆԻԱ

Թոգիոցի Իշիկամի անուն բժիշկը, Ճապոնիոյ բժշկական ճեմարանին հաղորդած է թէ՝ տարիներէ իվեր, իր գտած մէկ նոր դեղով. յաջողալից փորձեր կընէ թոքախտը դարմանելու համար.

Թոքախտաւորներէն մէկ երրորդ մասը բժիշկ Իշիկամի ոճով դարմանուելով, բոլորովին ապաքինած են.

Եօթը հիւանդանոցներէ ստացուած տեղեկագիրներու համաձայն, ուր, թոքախտաւորները բժիշկ Իշիկամի գտած դեղով կը դարմանուէին հաստատուած է թէ՝ 219 հիւանդներէ 79 հոգի բոլորովին ապաքինած է. 80 կայ վար ի վերոյ ապաքինած, 15 մեռած, իսկ 45-ը այլ եւ այլ պատճառներով մինչեւ վերջը յառաջ տարած չեն դարմանումը։

***

Մի՛թէ ասով գտնուած համարելու է թոքախտի դարմանումի կերպը. Ճապոնացիները զինուորական արուեստի մէջ ցոյց տալէ վերջ իրենց կարողութիւնը այսօր կուգան զայն հաստատել և գիտութեան մէջ. Հին Եւրոպան որ այսքան զոհեր կուտայ այս մահաբոյր հիւանդութեան, այսօր ակնդէտ յուսայից կը նայի Ճապոնիոյ, ուստի կուգայ այս շատ եւ շատ սփոփիչ լուրը.

Печатница на П. Глушковъ С-ве Вар.

Այդ անծանօթ ժառանգորդը պէտք է Մատլէն սպասուհին պահէ, և կամ անոր տարեկան 400 ֆր. եկամուտ մը յատկացնէ մինչեւ մահը։

Կը խնդրեմ Տ. Սէրվիէրէն, կալուածատէրի Վիանթէ ու իմ բարեկամս, ստանձնելու կտակակատարի պաշտօնը, ի յիշատակ այն լաւ յարաբերութեանց զոր ունեցած ենք իրարու հետ։ Ի վարձատրութիւն իրեն պատճառելիք ձանձրոյթիս, կը կտակեմ ամբողջ մատենադարանս, այն վիճակին մէջ՝ զոր պիտի գտնեն մահուանս օրը։

Կը խնդրեմ վերջապէս որ իմ թաղումս խիստ կարճ ու պարզ ըլլայ. ոչ մէկ արարողութիւն չի կատարուի, ոչ մէկ ճրագ չի վառի։ Եւ որովհետեւ թաղմանս հանդէսին համար և ոչ իսկ փարա մը կը ձգեմ, այս հոգը կը վստահիմ գիւղական քահանայ Պլանշարին։

Ժիւլ-Բիէր-Մարի Տէրվէլ
Քահանայ

—ՎԵՐՋ—